



ՀԱՏՈՐ ԻԷ-

1889

ԴԵԿՏԵՄԲԵՐ

## Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

ԵԶՆԻԿ ԵՒ ԻՒՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ



ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ նախկին թշնամիներէն մին եղաւ Մարկոն, և թերևս քան զամէնն աւելի ռիսերիմ և ֆլասակար որոյ ազանդն՝ փոխանակ նուազելաւ ժամանակաւ, ևս քան զևս սաստկացաւ և տեւց մինչև ՚ի հինգերորդ գար եկեղեցւոյ: Գրեթէ բոլոր Ս. Հարք, և մանաւանդ աւելի նշանաւորքն գիտութեամբ, հարկ համարեցան ոգւով չափ կառիլ նորա դէմ թէ բանիւք և թէ գրովք: Վասն զի նման ապականիչ հրոյ՝ դիմացը ելլողը կ'այրէր և կը սպառէր, հարկ էր ամենայն ուժոյ զօրութեամբ առջեւ առնուլ, Այլ ամենէն աւելի ցաւալին այն էր, որ այս հրդեհս կ'արծարծէր մեր աշխարհին շուրջը, թէպէտ առանց սաստիկ ներգործելու իւր շար ազդեցութիւնը, և պատեր էր զայն գրեթէ սպառնալից հեղեղի մի նման: Վասնզի սկսեալ ՚ի Պոնտոսէ, իջաւ անտի ՚ի Միջագետս Ասորոց, ՚ի Պաղեստին, և ապա իւր մեծագոյն ծաւալումը գտաւ առ Պարսիկս: որով սա քան պարսկական դէնը աւելի վասն գաւոր գտնուեցաւ, որքան զի ճմարտութեան արտաքին կերպարաւ նաց կամ անուան ներքև կը ծածկէր ստութեանց ազբուրը: Սոյն

1. Որպէսզ են, Ս. Երանոս, Ս. Յուսէինոս վկայ, Հուդոն, Ս. Թէոփիլոս Ամառացի, Տէրաուղիանոս, Կղեմէս Աղեքսանդրացի, Որոգէնէս, Ս. Կիւրեղ Երուսաղեմացի, Ս. Ոսկերբան, Ս. Եպիփան, և այլք:

պատճառաւ ահա Եզնիկ՝ յետ հերքելու Պարսից քէշը, կը մատչի յառաջ Դ գրոց մէջ հերքել Մարկիոնի աղանգը, և կը սկսի այսպէս. « Մարկիոն մուտրեալ մուծանէ ստուծիւն ընգդէմ աստուծոյն օրինացո», և այլն (էջ 243)։ Այլ ո՞վ է արդեօք Մարկիոնս այս, ուստի, ինչ ազդէ կամ ինչ կրօնքէ. — ոչինչ չես գանձեր նոյն էջերուն մէջ, և ոչ իսկ նախորդ գրքին վերջը, ինչպէս սովոր էր ընել. հեթանոսութեան պղտոր մթնոլորտէն կ'անցնի յանկաբժ Քրիստոնէութեան պայծառ երկինքը՝ փարատելու համար անոր մէջ գտնուած սևագորշ ամպերը։ Ոչինչ կապ կամ շարայարութիւն չի տեսնուիր այս Դ գրքին և իւր նախընթացին մէջ, որոյ վերջաբանն իսկ արդէն անկատար է և թերի։ Ուստի հարկ է գնալ մինչև 'ի վերջս 'ի գրոց (296 էջ), ուր համառօտ՝ այլ Կոհնացիչ տեղեկութիւններ կու տայ ընթերցողաց Մարկիոնի և նորա վարդապետութեանց մասին։ Սոյն նախածանօթութիւնս, ըստ օրինի ուղիղ կարգաբանութեան, հարկ էր գտնուիլ նախ քան զսկսուած գրոցն, ինչպէս սովոր են ընել մատենագիրք, և ինչպէս որ կը տեսնեմք՝ 'ի գիրս Ս. Եպիփանու, յորմէ բառ առ բառ թարգմանուեր է այն հատուածը. — ահա կ'ընծայեմք աստ մեր ընթերցողաց 'ի բաղդաստութիւն փոքրիկ մաս մը։

ԵԶՆԻԿ

Ս. ԵՊԻՓԱՆ

ԺԶ. Մարկիոնս այս 'ի Պոնտացոց աշխարհէ անտի եղեալ էր, որդի եպիսկոպոսի։ Եւ սպականեալ զոյոս մի, գնաց փոխստական վասն մերժելոյ զնա յեկեղեցոյ իւրոյ իսկ Հօրն։ Եւ երթեալ 'ի Հռոմ խնդրել ապաշխարութիւն յայնմ ժամանակին, և շհասեալ այնմ՝ գրգռեցաւ ընգդէմ հաւատոց։ Եւ եզեալ երիս առաջս, ուսուցանէ զբարոյ և զարդարոյ և զգարէ։ Եւ զնոր կտակարանըս օտարոտի համարի 'ի Հոնյն. և յայնմանէ, որ 'ի նմայն խօսէր, զյարութիւն մարմնոյ արհամարհէ։ Եւ մկրտութիւն ոչ մի միայն տայ, այլ և երիս յետ յանցանելոյ. և փոխանակ երախայից մեռելոց ստիպէ առնուլ կնիք։ Եւ այնչափ յանգգնեալ մինչեւ կանանց հրամայէ մկրտութիւն տալ, զոր ոչ ոք իշխեսաց յայլոց աղանդոցն առնել։

MARCIO oriundos ex Ponto<sup>1</sup>, episcopo patre natus est: a quo ob virginis stuprum ejectus ex ecclesia, Romam aufugit. Ubi cum ab iis, qui tum Ecclesiae praeerant<sup>2</sup>, penitentiam frustra postulasset, catholicam fidem oppugnare instituit. Quamobrem tria esse principia dixit, bonum, justum et malum. Novum testamentum a vetere ejusdemque auctore alienum esse docuit. Carnis resurrectionem sustulit. Non unum baptismum dumtaxat, sed etiam tria post delictum indulget. Pro mortuis illorum catechumenis, baptismum alii suscipiant. Mulieribus conferre baptismum sine ullo discrimine permittit.

1. Ս. Եպիփանս այսպէս կ'ըսէ Մարկիոնի հայրենեաց համար. « Այրս այս էր յաղգէ պոնտացի, 'ի կողմանց անտի Հելլենոպոնտոս յօրջորջելոյ, 'ի Սինապ քաղաքէ, ըստ յաճախ համբաւելոյ զմանէ զբուցացն. » (Ս. Եպիփ. Ընգ. Հերետ. Ա. Գիրք. Գլ. Գ.)։

2. Ըստ Ս. Եպիփանու, և Ս. Արեւոյ, և այլոց պատմագրաց, նոյն ժամանակները

Մարկիոնն Կերզոնի սկզբանց և վարդապետութեանց վրայ հիմնեց և բարձրացուց իւր մուշար վարդապետութիւնը, իւր խախուտ շէնքը. միայն այսու զանազանութեամբ, որ Կերզոն երկու սկզբունք կը դընէր, իսկ Մարկիոնն երրորդ մ'այլ աւելցուց:

Յէջս 243-250՝ գեղեցիկ և պայծառ կերպով կը բացատրէ Եզնիկ Մարկիոնի մուշար ազանդոյն զլխաւոր վարդապետութիւնքը, որը ուրիշ բան չեն, բայց եթէ մի քանի քրիստոնէական վարդապետութիւնք՝ պիւթագորեան, պղատոնական և ստոյիկեան իմաստասիրութեան գաղափարաց հետ խառնեալք<sup>1</sup>, վասնզի 'ի հնումն գիտէին յիրաւի Պիւթագոր, Պղատոն և Ստոյիկեանք, թէ մարդուս մէջ կայ խառնուրդ ինչ զօրութեան և տկարութեան, մեծութեան և նուաստութեան, երջանկութեան և թշուառութեան. ուստի և կը համարէին, թէ մարդկային հոգին ունի իւր ծագումն իմաստուն և բարբար իմացականութենէ. բայց ապա նուաստանալով իւր բնական գերագոյն աստիճանէն, միացիր և գրեթէ բանտուեր է երկրաւոր և թանձր գործարանաց մէջ. Աստի ահա կը ծագէր անոնց մտքին մէջ հակասութիւն, որով չէին կարող իմանալ թէ ինչպէս մի և նոյն պատճառն և գերագոյն իմաստութիւնն, որ է Աստուած, ստեղծած ըլլայ և միացուցած երկու այսպիսի իրարու ներհակ գոյացութիւններ: Աստի հերետիկոսն Կերզոն, և նորա հետևողն Մարկիոնն, ուզելով միացնել իրարու հետ Պիւթագորայ սկզբունքը և քրիստոնէութեան հիմնական վարդապետութիւնքը, երկու զանազան սկզբունքներ դրին. մին՝ բարի, որուն կ'ընծայէին հոգւոյն ստեղծումը, իսկ միւսն՝ չար, որուն կու տային մարմնոյն և աշխարհիս ստեղծումը. երկուքն ևս մշտնջենաւորք և հարկաւորք: Սակայն Մարկիոնն յաւելապա և երրորդ մի, որ է՝ նիւթն կամ հիւշ. և կամ, ինչպէս Եզնիկ կ'ըսէ. « Իւ եդեալ երիս առաջս, ուսուցանէր զբարւոյ և զարդարոյ և զարես, որոնք չէ թէ միայն իրարմէ զաս և որիչք են, այլ և թըշնամիք իրերաց:

Ապա կը գնէ Եզնիկ թէ ինչպէս կը բացատրէր Մարկիոնն Ագամայ ստեղծումը, նորա յանցանքը և պատուհասը, և հուսկ ապա Յեսուայ կամ Յիսուսի մարդանալը, նորա մահը և յարութիւնը, և այլն. սակայն այս ամենայն այնպէս խանգարեր և աղաւաղեր է, որ ամենեւին նոր և օտարոտի իրողութիւնք յառաջ եկեր են. ստուգիւ հեթանոսական գառանցանք և առասպելաբանութիւնք: Շատ հմուտ և բնդարձակ կերպով կը գնէ մի առ մի նորա մուշարութիւնքը, որ ուրիշ Ս. Հարց մէջ այսու ոճով չեն գտնուիր. վասն զի կ'երևի թէ հի-

անմիջապէս նահատակուեր էր Հիգինոս հայրապետն Հռովմայ, իննբորդ 'ի Ս. Պետրոսէ (Յ. Ք. 141-142), որուն յաջորդէց Պիոս Ա.

1 Տերտուղ. Ընդգեմ Մարկիոնի. — Ս. Երան. Ա. 4:

մնօրէն քններ է Մարկիոնի աղանդը և այնպիսի տեղեկութիւններ ստացեր է, որ ըստ վկայութեան նոյն իսկ Էզնկայ, « Չայն ոչ ամենեքին գիտեն, այլ սակաւք 'ի նոցանէ » (էջ 250) . վասն զի յատուկ ոճով մի կամ կարգաւ գրի վրայ չեն առած, այլ « Աւանդեն զուսումն միմեանց 'ի բերանոյ », որով շատ դիւրին և կարելի էր, թէ այլևայլ փոփոխութիւններ կրէին անոնք . և ապա կը յաւելու, թէպէտ « Ասեն, օտարին՝ գնովք գնեալ է զմեզ . . . այլ թէ որպէս կամ իւ գնեալ իցէ, զայն ոչ ամենեքին գիտեն » :

Ըստ Էզնկայ, Մարկիոնի հաստատած երեք գլխաւոր սկզբունքներն՝ սոքա են . 1. Բարին, գերագոյն և անտեսանելի էութիւն, հայր Յիսուսի . 2. Արդարն, գերագոյն տեսանելի էութիւն, Աստուածըն Հրէից, արարիչ, օրէնսպիր և դատաւոր . և 3. Չարն, որ է նիւթըն : Այս է առաջ իրօք Մարկիոնի վարդապետութիւնն . կ'ըսէր նա, թէ գերագոյն և միակ բարի Աստուծոյն հետ՝ կայր ևս ուրիշ արդար աստուած մը, արարիչ չորեաց, ցանկացող պատերազմաց, յողորդող 'ի խորհուրդս, անողոք և մարդաւերձ . — Սակայն Մարկիոնի այս վարդապետութեանս մէջ յայտնի հակասութիւն կը տեսնուի . վասն զի չարութիւն և արդարութիւն, կանխագիտութիւն և անգիտութիւն բնաւ չեն կարող գտնուիլ մի և նոյն էակին վրայ, ինչպէս գեղեցիկ կերպով կը ցուցնէ զայն Էզնիկ (էջ 254-5) այսու բանիւք . « Թէ մշտնջենաւոր էր օրինացն աստուած, ապաքէն պարտ էր կանխագէտ և ամենագէտ էանալ . և թէ չէր կանխագէտ և ամենագէտ, ապա և կատարեալ իսկ չէր : Այն աւանդիկ կատարեալ երեւի, զի զերկինս և զերկիր ամենայն արար . և ոչ միայն մի երկինս՝ այլ երկուս, և զօրս բազումս : Եւ որ այնմ՝ ամենայնի բաւական եղեւ, զայն զի ոչ կարէր զիտել՝ թէ է ոք 'ի վեր քան զնա, յորմէ կասկած կայր նմա : Եւ եթէ գիտէր, ընդէր ոչ ամբացոյց զիւր տեղին, զի մի լինէր անդր մուտ հակառակորդին՝ որ կայր և ապստամբեցուցանէր զարարածս նորա 'ի նմանէ » :

« Եւ դարձեալ՝ բարին, զոր կոչեն, եթէ որպէս ասենն՝ բնութեամբ բարի էր, և չարութիւն 'ի նմա ոչ գոյր, զի այլոցն բարի խորհէր՝ նմա չար ընդէր խորհեցաւ, առնել զնա սրտառուչ յիւրոցն արարածոց : Զի սա հանապազ առնէ մարդիկ, և նորա միշտ հանեալ 'ի սմանէ, առնէ զսա թախծալից . որ ոչ բարւոյ գործ է՝ այլ չարի » :

Մարկիոնի վարդապետութեան գլխաւոր գաղափարն հիմնեալ է այն բացարձակ ընդդիմութեան կամ ներհակութեան վրայ, զոր կը

1. Այսպէս կը բացատրէ Տերաուզիանոս . Tantummodo bonus atque optimus. (Ընդ. Մարկ. Ա. Գլ. 2)

2. Ս. Երանոս . (Ընդ. Ներեոս. Ա. Գլ. 1է) — Տերաուզիանոս .

զանէր ընդ մէջ արդարութեան և շնորհաց, օրինաց և Աւետարանին, Հրէութեան և Քրիստոնէութեան. անլուծանելի հակասութիւն, ըստ Մարկիոսի, և որ ՚ի հարկէ կ'ենթադրէ երկու նախնական սկզբունքներ, բացարձակապէս իրարմէ զանազանք: Մասնաւոր կերպով ջանաց ցուցընել այս հակասութիւնս. և նոյն նպատակաւ զիրք մի շարագրեց, որ կը կոչուի «Առարկութիւնք կամ Հակասութիւնք»: Այնքան սաստիկ էր նորա ատելութիւնն ընդդէմ հին կտակարանին, որ բոլորովին մերժեց զայն. իսկ նոր կտակարանէն՝ միայն Ղուկասու աւետարանը կ'ընդունէր, և այն ևս յերրորդ զլիսէն սկսեալ և ուրիշ շատ փոփոխութեամբք. առաքելական թղթերէն՝ միայն Պօղոսի տասն թուղթերը կ'ընդունէր:

Դարձեալ Մարդեղութեան նկատմամբ կը պնդէր, թէ Քրիստոս իրական մարմին չառաւ, այլ միայն աւերելոյթ կերպարանք մը, ինչպէս կը քարոզէին երևութականք (δοκηται). որոց ընդդէմ կրտրուկ ոճով՝ այլ հզօր պատճառարանութեամբ կը գրէ Եղնիկ (յէշս 264—366). — Դարձեալ, մեռեալ երախայից մկրտութեան նկատմամբ այսպիսի տարօրինակ բան մի կը պատմէ Եղնիկ (էջ 392). Երբ երախայ մի կը մեռնէր առանց մկրտուելու, հարկ էր որ մեռելոյն մերձաւորներէն մին անոր մահուան անկողնոյն տակ ծածկուէր. ապա կը հարցընէին մեռելոյն՝ թէ կը փափաքի արդեօք մկրտուիլ, ուրուն տեղ կը պատասխանէր անոր կենդանի մերձաւորն, թէ «կ'ուզեմ մկրտուիլ», այս պատասխանին վրայ մկրտելով զմերձաւորը, մեռելոյն շահաւոր և օգտակար կըլլար: Սոյն վարդապետութիւնս կամ սովորութիւնս Մարկիոսի կ'ընծայէ Եղնիկ, անշուշտ Ոսկերեւրանէն առնելով, որ ընդարձակ կերպով կը խօսի այս նիւթոյս վրայ իւր մեկնութեանց մէջ (Ա. Կորնթ. ճառ 10). սակայն ուրիշ ոչ ոք ՚ի Ս. Հարց, որք Մարկիոսի դէմ գրեր են, չի յիշատակեր այս բանս, ուստի և շատ հաւանական է թէ Մարկիոսի հետեւողք հաստատած ըլլան զայս: Ահա այս ամէն մտորութիւնները և ուրիշ ասոնց նման այլանդակութիւնք՝ գեղեցիկ և հզօր գրչաւ կը հերքէ Եղնիկ, և կարելի է ըսել, թէ այս Դ գիրքս իւր ամբողջութեան մէջ անթերի և անայլալակ մնացեր է. վասն զի ամէն էջի մէջ, ամէն պարբերութեանց մէջ կը տեսնուի մի այնպիսի պատշաճ համադրութիւն մասանց, որ կարելի չէ նկատել անոր մէջ ո՛ր և է խանդարումն: Քան ուրիշ ամէն գրքի մէջ աստ յաջողք է Եղնիկ. ասոր մէջ աւելի տիրաբար և հմուտ կերպով կը շարժէ իւր գրիչը, աւելի զօրաւոր փաստեր կը դնէ և համոզիչ հետեանքներ յառաջ կը բերէ, որքան զի աւելի մերձաւոր էր սա քրիստոնէական կրօնից, ուստի և նոյնքան ևս վտանգաւոր: